ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **<<ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/18>>**

08.12.2020թ. ստացված հարցումը և 09.12.2020թ. դրա վերաբերյալ ներկայացված պարզաբանումը.

Հարցադրում N1 – Հրավերում նշված տեղեկության համաձայն պետք է կառուցվեն և վերակառուցվեն Ծաղկաձոր քաղաքի 44 փողոցների կոյուղագծերը, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 26343գծմ: Համաձայն հրավերի նախագծային աշխատանքները պետք է իրականացվեն ՀՀ-ում գործող քաղաքաշինական նորմերի ու կանոնների խստիվ պահպանմամբ: Համաձայն հրավերում ներկայացված պահանջների նախագծային աշխատանքների մշակման համար սահմանված է 45 օրացուցային օր, իսկ նախագծման բյուջեն սահմանված է 5մլն ՀՀ դրամ:

Ելնելով նախագծային աշխատանքների մեր երկարամյա փորձից, ամենահամեստ գներով հաշվարկման դեպքում, նշված կոյուղագծերի շինարարության ընդհանուր արժեքը կկազմի մոտ 1մլրդ ՀՀ դրամ, որին համապատասխան էլ <<Քաղաքաշինական փաստաթղթերի մշակման աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի >> համաձայն նախագծման գումարը կազմում է մոտ 25մլն ՀՀ դրամ: Նման աշխատատար և ծավալուն ծրագրի համար, պահպանելով նշված բոլոր աշխատանքների պատշաճ մակարդակի կատարումը, կպահանջի 5-ից 6 ամիս ժամանակ:

Նկատի ունենալով հայտարարված մրցույթի պայմանները խնդրում եմ հաստատել արդյոք այդ պայմաններում չկա որևիցե վրիպակ, քանի որ կոյուղագծերի նախագծման համար պահանջվող մանրակրկիտ դաշտային գործիքային ուսումնասիրությունների, հետազոտությունների և բուն նախագծային ծավալուն աշխատանքների պատշաճ որակի իրականացումը պահանջում է այլ պայմաններ:

Պարզաբանում N1 - Հարգելի մասնակից,

Ի պատասխան Ձեր՝ 08.12.2020թ. հարցմանը, հայտնում եմ հետևյալը.

1. Նախագծային աշխատանքների մշակման համար սահմանված 45 օրացուցային օր ժամկետի առումով հրավերում կկատարվի համապատասխան փոփոխություն:
2. <<ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/18>> ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով (ոչ առկա ֆինանսական միջոցներով): Նշված 5մլն ՀՀ դրամը վերաբերում է մեր կողմից կանխատեսվող գումարի չափին: Վերը նշված օրենքի շրջանակում իրականացվող ընթացակարգերի դեպքում մասնակիցները հրավիրվում են

միաժամանակյա բանակցությունների, որոնց արդյունքում էլ, հրավերում մեր կողմից նշված պայմաններով մրցույթի չկայացման դեպքում, հետագայում հայտարարվող ընթացակարգի պայմանները կվերանայվեն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել
ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/18 **ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արփինե Ավետիսյանին:**
Հեռախոս՝ 0223-6-04-02:
Էլեկտրոնային փոստ՝ tsaghkadzor.tender@mail.ru:

Պատվիրատու՝ Ծաղկաձորի համայնքապետարան: